ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> դեկտեմբերի 2024թ. N ՄՈ 1568-Հ

ք. Արմավիր

ԳՈՌ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ «ԷՋՄԻԱԾՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշման N1 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի 2024 թվականի դեկտեմբերի 2-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. 2024 թվականի դեկտեմբերի 2-ից «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Գոռ Ասատրյանին՝ մինչև վեց ամիս ժամկետով:
2. «Էջմիածնի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Ասատրյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել 1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Յուրաքանչյուր ամսվա լրավճար սահմանել տվյալ ամսվա վճարովի ծառայություններից ստացված դրամական ընդհանուր մուտքերի 1 տոկոսի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Խ.ՄԿՐՏՉՅԱՆ**